

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ. Ը Օ Օ Բ Շ Ե Հ Ի Յ. R E P O R T S.

ԴԻՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՎՐԱ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ < Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանահրական գիտությունների թեկնածու
gayane.grig.grigoryan@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2024.2(31)-44

Համառողագիր

Քովիդ 19 (COVID-19) համաճարակի ժամանակ սկսվեց դիմակների պարտադիր գործածությունը: Բազմաթիվ բացասական ազդեցությունների թվում (առողջական, հոգեբանական և այլն) տուժեց նաև մարդկային բանավոր հաղորդակցության դաշտը. որն արտահայտվեց ձայնային էներգիայի թուլացմամբ և արտաքերական ապարատի տեսանելի նշանների կորստով: Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվում է դիմակի ազդեցությունը մարդկանց բանավոր հաղորդակցման, մասնավորապես խոսքի ընկալման գործընթացի վրա: Կատարվել են գիտափորձեր՝ դիմակով և առանց դիմակի հաղորդակցման դեպքերի քննությամբ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դիմակ, Քովիդ-19 (COVID-19), լսելիության նվազում, խոսքի ընկալում:

THE EFFECT OF MASK ON SPEECH PERCEPTION

GAYANE GRIGORYAN

NAS RA Institute of Language after H. Acharyan

Senior researcher, PhD

gayane.grig.grigoryan@gmail.com

Abstract

During the Covid-19 epidemic, the mandatory wearing of masks began. Among the many negative effects (health, psychological, etc.), the sphere of human oral communication was also affected, which is expressed by the weakening of sound energy and the loss of visual signs of the pronunciation apparatus. The present study examines the effect of a mask on human oral communication, in particular on the process of speech perception. Scientific experiments were conducted, examining cases of communication with and without a mask.

Keywords and phrases: mask, covid-19, hearing loss, speech perception.

ВЛИЯНИЕ МАСКИ НА ВОСПРИЯТИЕ РЕЧИ ГАЯНЕ ГРИГОРЯН

Институт языка им. Р. Ачаряна НАН РА
Старший научный сотрудник, к.ф.н.
gayane.grig.grigoryan@gmail.com

Аннотация

Во время эпидемии Covid-19 началось обязательное ношение масок. Среди множества негативных последствий (медицинских, психологических и др.) затрагивалась и сфера устного общения человека, что выражается в ослаблении звуковой энергии и утрате зрительных признаков произносительного аппарата. В данном исследовании изучается влияние маски на устное общение людей, в частности на процесс восприятия речи. Были проведены научные эксперименты, изучающие случаи общения в маске и без нее.

Ключевые слова и словосочетания: маска, covid-19 (covid-19), потеря слуха, восприятие речи.

Ներածություն

Քովիդ 19 (COVID-19) համաճարակի ժամանակ սկսվեց դիմակների պարտադիր գործածությունը: Բազմաթիվ բացասական ազդեցությունների թվում (առողջական, հոգեբանական և այլն) տուժեց նաև մարդկային բանավոր հաղորդակցության դաշտը. դա արտահայտվեց ձայնային էներգիայի թուլացմամբ և արտաքրական ապարատի տեսանելի նշանների կորստով:

Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվում է այն երևույթը, թե ինչպես է պաշտպանիչ դիմակն ազդում մարդկանց բանավոր հաղորդակցման գործնթացի վրա: Կատարվել են գիտափորձեր՝ դիմակով և առանց դիմակի հաղորդակցման դեպքերի քննությամբ:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ դիմակով և առանց դիմակի հաղորդակցման և ընկալման տարրերությունը հասնում է 25-30 տոկոսի: Բանախոսների՝ դիմակով խոսելիս կորչում է տեղեկության մոտ մեկ երրորդը. քանի որ տեսանելի ազդանշանները բացակայում են, իսկ ձայնային էներգիան՝ թուլանում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բերանի, մասնավորապես շուրթերի, ծնոտի, երբեմն նաև քթի ծածկված

լինելը մեծ ազդեցություն է ունենում ունկնդրի կողմից տեղեկության ընկալման վրա: Այս ուսումնասիրությունն արժեքավոր է այնքանով, որ հնարավոր է նման համաճարակների ժամանակ մշակել հաղորդակցման ռազմավարություն և միջոցներ, որ տեղեկության որոշակի քանակչորչի դիմակի պատճառով: Դիմակներ կրելիս խոսքի հասկանալիությանը և ըմբռնելիությանը օգնում է ավելիդանդաղ, հստակ ու բարձրաձայն խոսելը և ավելի պարզ արտասանությունը:

Դիմակները հատկապես խանգարում են խոսքի ընկալմանը, եթե դրանք պատրաստված են հաստ կամ ամուր հյուսվածքներից, որոնք խլացնում են ձայնը: Սա առանձնապես վերաբերում է այն անձանց, որոնք հաղորդակցման ժամանակ մեծապես ուշադրություն են դարձնում տեսանելի նշաններին՝ բերանի, շրթունքների, ծնոտի շարժմանը, դիմախաղին և այլն: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տվել որ մարդիկ ժամանակի ընթացքում հարմարվում են դիմակ կրելուն, դիմակի պատճառով առաջացած ձայնաբանական փոփոխություններին և ընկալում են արտաբերված խոսքը լսողական այնպիսի ազդանշանների միջոցով, ինչպիսիք են հնչերանգը (ինտոնացիան), ձայնի տոնայնությունը. կարևորվում է նաև խոսքաշարը:

Թեմայի ուսումնասիրության պարմությունից

Համաճարակը և նրա հետ կապված սահմանափակումները բացասարար են ազդել ողջ հասարակության և հատկապես լսողության խանգարում ունեցող մարդկանց կյանքի որակի վրա: Շոտլանդիայում անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ արգելափակման ժամանակահատվածում լսողության խնդիրներ ունեցող մարդիկ սկսել են ավելի հաճախ օգտագործել տեսազանգեր, քան նախկինում: Համաճարակը հանգեցրել է լսողության խանգարում ունեցող մարդկանց կյանքի որակի վատթարացման: Սակայն համաճարակի հետևանքների ավելի ճշգրիտ և տարբերակված գնահատականները պահանջում են լրացնելիք հետազոտություն [8, с. 56].

¹ Այս իմաստով թափանցիկ դիմակները կամ դեմքի վահանները առավել հարմար են տեսողական հաղորդակցության ազդանշանները ընկալելու համար:

Մեկ այլ հետազոտության մեջ նշվում է, որ պաշտպանիչ դիմակները խլացնում են բարձր հաճախականության հնչյունները, որոնք կարևոր են խոսքի ըմբռնման համար, և արգելափակում են տեսանելի ազդանշանները, որոնք հատկապես կարևոր են լսողության կորուստ ունեցող մարդկանց համար [1, p. 36-39]:

Արիզոնայի համալսարանում դոկտոր **Բրեն Սթորիի²** և նրա թիմի կողմից իրականացված փորձը ներառում է տարբեր տեսակի դիմակների ծայնաբանական (ակուստիկ) ազդեցությունը խոսքի ընկալման և հաղորդակցության վրա: Նրանք ուսումնասիրություններ են կատարել՝ պարզելու, թե ինչպես են դիմակների տարբեր տեսակներ ազդում խոսքի հասկանալիության, լսելիության և պարզության վրա: Ըստ այդ փորձերի՝ դիմակները որոշակիորեն թուլացնում կամ խլացնում են խոսքի հնչյունները, սակայն դրանց ընդիհանուր ազդեցությունը խոսքի ընկալման վրա տարբեր է խոսակցական միջավայրում: Այնուամենայնիվ, լսողության խանգարումներ ունեցող անհատները կամ նրանք, ովքեր մեծապես ուշադրություն են դարձնում տեսանելի նշաններին, ավելի մեծ դժվարություններ են ունենում դիմակ կրող անձի խոսքը հասկանալու հարցում:

«How Face Masks Interfere With Speech Understanding of Normal-Hearing Individuals: Vision Makes the Difference» (Ինչպե՞ս են դեմքի դիմակները խանգարում նորմալ լսող մարդկանց խոսքի ըմբռնմանը. կարևոր տարբերությունը տեսանելիությունն է) հոդվածում [3, p. 282-288] հեղինակները ցույց են տալիս, որ տեսալսողական խոսքի ընկալման վրա մեծ ազդեցություն է ունենում դիմակ կրելը: Հետաքրքրական այն է, որ նոյնիսկ լսողական խնդիրներ չունեցող անձանց պարագայում ևս տեսանելի կողմի ապահովումը անշափ կարևոր է: Փորձարկումներում նորմալ լսող անձինք ավելի լավ են ընկալել խոսքը, եթե տեսողական ազդանշանները հասանելի են եղել:

² Դոկտոր Բրեն Սթորին խոսքի վերաբերյալ գիտության և ծայնաբանության (ակուստիկայի) բնագավառում ականավոր հետազոտող է, որը հայտնի է խոսքի արտաքերման, ընկալման և տեխնոլոգիայի վերաբերյալ իր աշխատանքներով: Նա Արիզոնայի համալսարանում խոսքի, լեզվի և լսողության բնագավառի գիտությունների ամբիոնի դասախոս է:

Օլիվեր Դամետ և Տոան Լու Շունհ (Olivier Damette & Toan Luu Duc Huynh) «Face mask is an efficient tool to fight the Covid-19 pandemic and some factors increase the probability of its adoption» (Դեմքի դիմակը Քովիդ-19 համաճարակի դեմ պայքարի արդյունավետ գործիք է, և որոշ գործոններ մեծացնում են դրա ընդունման հավանականությունը) հոդվածում [4, p. 1-2] համաշխարհային մասշտաբով ուսումնասիրել են դիմակի օգտագործման դինամիկ ազդեցությունը՝ օգտագործելով տվյալների հարուստ հավաքածու։ Հոդվածում առավելապես խոսվում է դիմակի դերի մասին՝ որպես արդյունավետ գործիք համաճարակի դեմ պայքարում։

Ժողեֆ Տուկանոն և իր հեղինակակիցները «Effects of face masks on speech recognition in multi-talker babble noise» հոդվածում [5, p. 1-12] գրում են, որ դիմակները կարևոր գործիք են քովիդի տարածումը կանխելու համար։ Հեղինակներն ուսումնասիրել են տարբեր տեսակի դիմակների ազդեցությունը խոսքի ճանաչման վրա՝ ֆոնային աղմուկի տարբեր մակարդակներում։

Դոկտոր **Գոլդին-Միդոն** և նրա գործընկերները (Չիկագոյի համալսարան) ուսումնասիրել են, թե ինչպես է դիմակ կրելու պատճառով տեսանելի նշանների կորուստը ազդում հաղորդակցության վրա հատկապես կրթական միջավայրում։ Նրանք հետազոտել և առաջարկել են նաև հաղորդակցության արդյունավետության բարձրացման այլ միջոցներ ևս, ինչպես ժեստերի կամ այլնտրանքային տեսանելի նշանների օգտագործումը։

Դոկտոր **Մին** և նրա թիմը (Մինեսոտայի համալսարան) ուսումնասիրել են դիմակների ազդեցությունը խոսքի ընկալման և հաղորդակցության վրա առողջապահական հաստատություններում, հատկապես լսողության խանգարումներ կամ լեզվական խոչընդոտներ ունեցող հիվանդների համար։ Նրանք նաև հետազոտել են այն խնդիրը, թե ինչպես են ունկնդիրները ժամանակի ընթացքում հարմարվում «դիմակավորված» խոսքին։ Արդյունքները ցոյց են տվել, որ թեև որոշակի դժվարություններ են եղել, այնուամենայնիվ, ունկնդիրները հարմարվել են այդ միջավայրին և արդյունավետ կերպով հաղորդակցվել տարբեր լսողական ազդանշանների միջոցով։

Դոկտոր **Զեսիկա Ուեսթը** և նրա գործընկերները (Հարավային Կալիֆոռնիայի համալսարան) հետազոտություն են անցկացրել կրթական միջավայրում խոսքի ընկալման և հաղորդակցության վրա դիմակների ազդեցության վերաբերյալ, հատկապես երեխաների և զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նրանք հետազոտել են նաև հաղորդակցության արդյունավետության լավարկման (օպտիմալացման) ռազմավարությունը:

Դիմակի ազդեցությունը

Դիմակովխոսելիսսելիությաննվազումըկարողէտարբերինել՝կախված միքանիգործոններից՝ դիմակիտեսակից, նյութից³, հնչողխոսքիհնչյունների արտաքերման հստակությունից և այլն: Նշենք այդ գործոններից կարևորները:

Խլացված խոսք և լսելիության թուլացում: Դիմակները նվազեցնում են խոսքի հնչյունների ուժգնությունը (ինտենսիվությունը) և թուլացնում հաճախականությունը: Լսելիության այս նվազումը դժվարացնում է հստակորեն լսել խոսքը, մանավանդ եթե միջավայրն աղմկոտ է:

Խոսքի պարզության նվազում: Դիմակները ազդում են նաև խոսքի հստակության վրա՝ թուլացնելով հնչյունների արտաքերումը. որի արդյունքում փոխվում է դրանց սպեկտրալ բնութագիրը: Փորձերը ցույց են տվել, որ որոշքաղաձայնինչյուններ (s, f, p, sh) ավելիշատ են ենթարկվում ազդեցության, քանմյուանները. դահանգեցնում է հասկանալիությաննվազմանը:

Տեսանելի նշանների կորուստ: Մարդու կողմից խոսքի ընկալումը բազմամոդալ է. դա նշանակում է, որ այն հիմնված է ոչ միայն լսողական տեղեկատվության, այլև շրթունքների, ծնոտի, լեզվի շարժումների, դեմքի արտահայտության և ժեստերի վրա: Իսկ դիմակները ծածկում են խոսակցական

³ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որորոշ դիմակներ, որոնք ավելի հաստկամ ամուր հյուաված գործվածքից ենպատրաստված, թուլացնում են խոսքի հնչյունների հաճախականությունը, որը հանգեցնում է խոսքի հասկանալիության նվազմանը, հատկապես աղմկոտ միջավայրերում, որտեղ ֆոնային աղմուկը խառնված է խոսքի ազդանշանների հետ:

ապարատի շարժումները: Տեսանելինշանների՝ դիմակի տակ փակված ինելը ստեղծում է դժվարություն խոսքի ճշգրիտ ընկալման համար:⁴

Դիմակները ազդում են նաև հաղորդակցմանհասարակական և զգացմունքային կողմի վրա: Դեմքի արտահայտությունը վճռորոշ դեր է խաղում շփումների ընթացքում զգացմունքների և հասարակական հարաբերությունների ձևավորման մեջ: Երբ դեմքի արտահայտությունը մասամբ քողարկվում է դիմակով, դա կարող է հանգեցնել թյուրիմացությունների կամ դժվարությունների՝ հոգական նրբությունները ճշգրիտ մեկնաբանելու հարցում:

Փորձառական վերլուծություն

Սույն հարցի ուսումնասիրման համար կատարվել են գիտափորձեր: Հետազոտողների առջև դրված է եղել հետևյալ խնդիրը. պարզել, թե դիմակը որքանով է ազդում խոսքի ընկալման վրա:

Գիտափորձն անցկացրել են << ԳԱԱ <. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայի աշխատակիցները և << ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» բաժնի մագիստրատորայի 2-րդ կուրսի ուսանողները. որոնք իրենց գիտահետազոտական փորձալրումն (արակտիկան) էին անցկացնում կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում: Փորձարկմանը մասնակցել են մարդիկ (22-30 տարեկան), որոնք տիրապետում են ժամանակակից գրական արևելահայերենին: Բոլոր մասնակիցները առողջական խնդիրներչեն ունեցել՝ կապված լսողության, խոսքի արտաքինական, ճանաչողական կամ նյարդաբանական խանգարումների հետ: Նրանց հանձնարարվել է խոսել բնական ձևով՝ հարմարավետ բարձրությամբ և արագությամբ: Գիտափորձի արդյունքները ուսումնասիրվել են և արվել

⁴ Այս խոչընդուղը հաղթահարելու համար տրվեցին նաև տեխնոլոգիական լուծումներ. ներդրվեցին թափանցիկ դիմակներ, դեմքի պաշտպանիչ վահաններ և դեմքի թափանցիկ ծածկույթներ՝ տեսանելի նշանները մասամբ վերականգնելու համար: Տեսանելի նշանների կորստի պարագայում թափանցիկ դիմակները կամ դեմքի վահանները որոշ չափով մեղմացրին այդ կորուստը՝ բարելավելով հաղորդակցման և ընկալման գործընթացը: Լսողության խնդիրներ ունեցող անձանց համար կիրառվեցին լսողության օժանդակ սարքեր:


Եզրահանգումներ: Գիտափորձի ընթացքում ապացուցվել է տեսանելի նշանների առկայության կամ բացակայության կարևորությունը, որը մեծ աղդեցություն է գործել հաղորդակցման և խոսքի ընկալման գործընթացում, հատկապես աղմկոտ միջավայրում:

Ունկնդրի համար տեքստերը եղել են անձանոթ՝ վերցված համացանցից՝ պատահականության սկզբունքով: Խոսողը եղել է մոտավորապես 1,5 մետր հեռավորության վրա: Փորձերն իրականացվել են դրսում՝ փողոցին կից այգում, որտեղ լսվում էր նաև ֆոնային աղմուկ: Ստորև ներկայացված է կարդացված տեքստերից մեկ օրինակ:

«Լեզուն և մտածողությունը անբաժանելի միասնություն են՝ միմյանցով պայմանավորված: Դրանց առանձնացումը, ի դեպ, տվյալ դեպքում խիստ պայմանական է, արվում է երևոյթը հստակ պատկերացնելու նպատակով: Լեզվաբանությունը գիտություն է առաջին հերթին մարդկային լեզվի մասին, որը քննվում է ոչ թե տարերայնորեն, այլ որոշակի մեթոդներով, մշակված սկզբունքներով և կիրառելի մոտեցումներով: Եվ դրանք ել իրենց զանազան դրսնորումներով կազմում են նրա ուսումնասիրության յուրահատկությունները»:

Տեքստը բաղկացած է 57 բառից, որոնցից չի հասկացվել 4-ը, այլ բառ է ընկալվել 4-ը: Այսինքն՝ ունկնդրի կողմից չի ընկալվել կամ սխալ է ընկալվել տեքստի 14 տոկոսը: Ստորև բերվում է նոյն տեքստը, որտեղ թափով նշված են այն բառերը, որոնք լավ չեն լսվել, սխալ են ընկալվել, (նաև ընկալվել են բարի թերականական այլ ձևով են, օրինակ՝ միմյանցով - միմյանց հետ), իսկ շեղ գրված բառերը ընդհանրապես չեն լսվել և ընկալվել:

«Լեզուն և մտածողությունը **անբաժանելի** միասնություն են՝ **միմյանց հետ** պայմանավորված: Դրանց առանձնացումը, ի դեպ, տվյալ դեպքում խիստ պայմանական է, արվում է երևոյթը հստակ **պատկերացնելու** նպատակով: Լեզվաբանությունը գիտություն է առաջին հերթին մարդկային լեզվի մասին, որը քննվում է ոչ թե տարերայնորեն, այլ որոշակի մեթոդներով, մշակված սկզբունքներով և կիրառելի մոտեցումներով: Եվ դրանք ել իրենց զանազան դրսնորումներով կազմում են **դրա** ուսումնասիրության յուրահատկությունները»:



Այսպիսով, պատկերներում ակնառու երևում է, որ դիմակ կրելու պատճառով տեղեկության 14 տոկոսը կորչում է (բառերը կամ լավ չեն լսվում, կամ սխալ են ընկալվում):

Անցկացվել են նաև այլ նմանատիպ գիտափորձեր, որոնք տվել են նույն արդյունքները:

Զայնաբանական (ակուստիկ) փոփոխություններ դիմակով և առանց դիմակի բարբերակներում

Դիմակ կրելը առաջացնում է ձայնաբանական փոփոխություններ՝ ազդելով խոսքի հնչյունների արտաքերման և ընկալման վրա: Նշվեց, որ դիմակները նվազեցնում են խոսքի հնչյունների ուժգնությունը և հաճախականությունը: Հատկապես տուժում են բարձր հաճախականության որոշ բաղաձայններ, որոնք հնչում են ավելի խլացված, երբ արտասանվում են դիմակով: Արտաքերած բառերի հնչյունների ուժգնությունը և հաճախականությունն ուսումնասիրելու նկատակով իրականացվել է փորձառական հետազոտություն՝ դիմակով և առանց դիմակի դաշտերի համար: Զայնագրությունները կատարվել են << ԳԱԱ <. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում նախապես կազմված բառացանկերի կիրառմամբ: Ընտրվել են երկվանկ և եռավանկ բառեր, որոնք գտնվել են հավասար պայմաններում (վանկերի քանակ, **առ** բաց և **ու** փակ ձայնավորներին կից հնչյունական շրջապատի ապահովումն այլն):


Ուժգնության և հաճախականության թվային տվյալները տրված են ստորև բերված այլուստակում, որից հստակորեն երևում է, որ դիմակով ար-

տասանելու ժամանակ թե՛ ուժգնությունը, թե՛հաճախականությունը, չնչին բացառությամբ, նվազում են՝ առանց դիմակի արտասանության դեպքի համեմատ:

| Առանց դիմակի | Դիմակով | | | |
|--------------------------|----------------|--------|--------------|--------|
| | Ուժգնություն | Հաճախ. | Ուժգնություն | Հաճախ. |
| Երկվանկ բառեր | | | | |
| կատակ | 76.5 | 229.7 | 70.1 | 160.3 |
| քաղաք | 72.4 | 156.9 | 68.6 | 158 |
| կարծիք | 73.8 | 174.2 | 66.7 | 161.4 |
| բյուրեղ | 73.8 | 154.3 | 70.5 | 160.8 |
| սուզանք | 74 | 156.1 | 68 | 145.8 |
| պուճուր | 72.8 | 162.4 | 66.9 | 134.8 |
| Ընդհանուր | 72.3 | 168.4 | 66.9 | 154 |

| | | | | |
|--------------------------|------|-------|------|-------|
| Եռավանկ բառեր | | | | |
| ասացվածք | 75.8 | 171.4 | 64.8 | 151.8 |
| ապակի | 73.8 | 156.5 | 66.4 | 161.6 |
| կատակել | 72.6 | 156.7 | 65.8 | 159.2 |
| սուրհանդակ | 74.5 | 179.9 | 67.6 | 165.8 |
| բուրավետ | 73.5 | 165.7 | 66.4 | 153.7 |
| սուզանել | 74.5 | 148.5 | 71.2 | 163.4 |
| Ընդհանուր | 72.7 | 162.9 | 66.4 | 159.1 |

Ստորև բերված հնչապատկերներում (կատակ, քաղաք, կարծիք) ակնհայտորեն երևում է ուժգնության և հաճախականության տվյալների տարբերությունը, որը որը կազմում է 6.9 դեցիբել և 22.8 հերց: Այսինքն՝ դիմակ կրելու պատճառով ուժգնությունը և հաճախականությունը նվազում են մոտ տասը տոկոսով:



Առանց դիմակի



Դիմակով

Զայնաբանական առանձին հետազոտության են ենթարկվել **ֆ**, **ս**, **պ**, շրաղաձայններ պարունակող բառերը, քանի որ այդ բաղաձայնները, ըստ փորձերի արդյունքների, ամենից շատ են ենթարկվել փոփոխությունների դիմակ կրելու պատճառով։ Ընդ որում նշված բաղաձայնները եղել են ձայնավորական շրջապատում՝ հիմնականում **ս** և **ե** ձայնավորներին կից։ ուսումնասիրվող բառերում բոլոր դեպքերում դրանց նախորդել է **ս** ձայնավորը՝ հնչյունական շրջապատը առավել չեղոք դարձնելու նպատակով, ուսումնասիրվող բաղաձայնները գտնվել են երկրորդ վանկում՝ լինելով վանկի առաջին բաղադրիչը։

| Առանց դիմակի | | Դիմակով | | |
|------------------|--------------------|--------------|--------------------|--------------|
| Բառ | Ուժգնություն dB | Հաճախ. Hz | Ուժգնություն dB | Հաճախ. Hz |
| ասելիք | 75.1 | 175.1 | 69.5 | 163.4 |
| աֆեկտ | 69.6 | 112.4 | 69.4 | 171 |
| ապակի | 73.4 | 157.6 | 71.1 | 158 |
| աշակերտ | 72.5 | 119 | 67.5 | 159 |
| Ընդհանուր | 71.5 | 150 | 68.2 | 162.9 |

Առանձին հաշվարկել ենք ոչ միայն ամբողջական բառերի ընդհանուր ուժգնությունն ու հաճախականությունը, այլև ուսումնասիրության առարկա բաղաձայնների (**ս**, **ֆ**, **պ**, **շ**) ձայնաբանական տվյալները։ Այստեղ ևս ուժգնությունն ու հաճախականությունը առավել մեծ են առանց դիմակի արտասանության դեպքում։

| Առանց դիմակի | | Դիմակով | | |
|-------------------------|--------------------|----------------|--------------------|--------------|
| հնչյուն | Ուժգնություն dB | Հաճախ. Hz | Ուժգնություն dB | Հաճախ. Hz |
| s | 69.9 | 175.4 | 62 | 151.4 |
| f | 63.1 | 167.7 | 61.4 | 175 |
| p | 67.1 | 161.1 | 63.8 | 159 |
| sh | 72.8 | 181.8 | 64.9 | 165 |

Եզրակացություններ

Փորձերի տվյալների վիճակագրական հաշվարկները թույլ տվեցին գալու հետևյալ եզրահանգումներին.

Դիմակը խաթարում է խոսքի ճիշտ ընկալումը: Ունկնդիրը կա’մ չի լսում արտաքերված բառը, կա’մ սխալ է ընկալում: Ունկնդիրը հավելյալ ջանքեր է գործադրում բառերը լսելու համար: Ըստ մեր դիտարկումների դիմակ կրելու պատճառով հաղորդակցման ընթացքում կորչում է տեղեկության 15-20 տոկոսը: Դիմակները նվազեցնում են խոսքի հնչյունների ուժգնությունը և հաճախականությունը: **Ֆ, ս, այ, շ** բաղաձայններ պարունակող բառերը ամենից շատ են ենթարկվել փոփոխությունների՝ դիմակ կրելու պատճառով: Դրանց ուժգնությունը տարբերությունը կազմել է մոտ 8 դեցիբելի սահմանում, իսկ հաճախականության տարբերությունը կազմել է մոտ 17 հերց: Պաշտպանիչ դիմակները լրացնում խոչընդոտ են արդյունավետ հաղորդակցության համար:

Գրականության ցանկ

1. **Corey, Ryan M. PhD; Jones, Uriah; Singer, Andrew C. PhD,** Comparison of the Acoustic Effects of Face Masks on Speech, The hearing journal, ***The Hearing Journal* 74(1):p 36,38,39, January 2021.**

2. Michelle Magee and others, Effects of facemasks on acoustic analysis and speech perception: Implications for peri-pandemic protocols.
<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7857500> .

3. Sönnichsen, Rasmus; LlorachTó, Gerard; Hochmuth, Sabine; Hohmann, Volker; Radeloff, Andreas, How Face Masks Interfere with Speech Understanding of Normal-Hearing Individuals: Vision Makes the Difference, *Otology & Neurotology*, Vol. 43, No. 3, 2022.

4.Olivier Damette, Toan Luu Duc Huynh, «Face mask is an efficient tool to fight the Covid-19 pandemic and some factors increase the probability of its adoption»,
<https://www.nature.com/articles/s41598-023-34776-7>

5.Joseph C. Toscano, Cheyenne M. Toscano, Effects of face masks on speech recognition in multi-talker babble noise, Published: February 24, 2021.
<https://journals.plos.org/plosone/article?id=10.1371/journal.pone.0246842>

6. Samannodi, M, and others, Impact of COVID-19 Pandemic on Medical Education: A Cross-Sectional Study in the Western Region of Saudi Arabia, published July, 2022. <https://www.dovepress.com/impact-of-covid-19-pandemic-on-medical-education-a-cross-sectional-stu-peer-reviewed-fulltext-article-AMEP>

7. Влияние качества жизни на формирование ценностной структуры населения России: Всероссийская научная конференция с международным участием. Сборник материалов. / Под общ. ред. Ю. П. Аверина. — Москва : МАКС Пресс, 2020. — 215 с <https://www.mdpi.com/2227-9032/10/9/1709>

8. Корниенко Александра Андреевна, Карташева Мария Сергеевна, О влиянии пандемии на качество жизни людей с нарушениями слуха, Сборник материалов Всероссийской научной конференции с международным участием, Москва, 2020.

https://lomonosov.msu.ru/file/event/6340/eid6340_attach_a3409745d790f138f328e3f11405c0fb2076c750.pdf#page=57